ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«11» 08 2023թ.
№ ԿԱՆԽ/2-1062

«Բիզնես Դայվերսիթի Լիմիթեդ» ՍՊԸ-ի
տնօրեն՝ Կ. Հովհաննիսյանին
հասցե՝ Յունիթ Ֆ, 11/Ֆ ՍԻԷՆԹԻ Թաուեր, 338
Հեննեսի Ռոուդ, Վան Չայ, Հոնկ Կոնգ
էլ. հասցե՝ rumpes@protonmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «Բիզնես Դայվերսիթի Լիմիթեդ» ՍՊ ընկերության միջև 30.06.2022թ. կնքված N ՄԱԱՊՁԲ-22-4-12 (փոփոխություն N 1 առ 05.12.2022թ.) գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը ոչ ուշ, քան 2023թ. հունիսի 30-ը պետք է մատակարարեր Պայմանագրի 5-րդ չափաբաժնով նախատեսված թվով 1900 հատ ապրանքներ, որոնք ընդհանրապես չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերության պահանջները (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. օգոստոսի 11-ին միակողմանի մասնակի՝ նշված չափաբաժնի մասով ևս լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Բիզնես Դայվերսիթի Լիմիթեդ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 28 273 865 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, որը հաշվարկված է մինչև 21.07.2023թ. դրությամբ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը ձեռնարկում է միջոցներ՝ «Բիզնես Դայվերսիթի Լիմիթեդ» ՍՊ ընկերության կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված կանխավճարի ապահովման գանձման ուղղությամբ, որը կազմում է 2 361 496 105 ՀՀ դրամ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am